



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ՅՈՒՇԵՐ

ՄԵԾԿԵՐՏԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ



ՀԵՂԻՆԱԿՈՒՔԻՆ

Կ. ԱՒԵՏԻՍԵԱՆԻ

ՕՏԵՍԱ



1911

ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, ՎԵՐԻ ՅԱՐԿ, ԹԻԻ 55

Կ. ՊՈԼԻՍ

11 ԱԳ Ս

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page. The text is faint and difficult to decipher but appears to be organized into several lines.


Handwritten text, possibly a signature or a specific note, located in the middle of the page.

Handwritten text, possibly a signature or a specific note, located in the lower middle section of the page.

Handwritten text, likely bleed-through from the reverse side of the page, located in the lower portion of the page.

ՅՈՒՇԵՐ

ՄԵԾԿԵՐՏԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅ ԳԻՒՂԵՐԻ ԿԵԱՆՔԻՑ



Հեղինակութիւն

Կ. Ա. ԵՏԻՍԵԱՆԻ

ՕՏԵՍԱ



1911


ՏՊԱՐԱՆ - ԳՐԱՏՈՒՆ Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ


ՄԵԾ ՆՈՐ ԽԱՆ, ՎԵՐԻ ՅԱՐԿ, ԹԻԻ 55

Կ. ՊՈԼԻՍ

697

Ugmy





Նաս հին ժամանակ Մեծկերսը ունէր
Անթիւ բարիքներ՝ լեցուն անպարներ,
Ուրախ ու զուարթ կեանք կը վարէին,
Ցաւ թրշուառութիւն բընաւ չունէին:

Աւագակ Քիւրսը զօռով թալանեց,
Մալերնիս սարաւ, բան մը չի թողեց,
Միջոց չունէին, ձէն չի հանեցին.
Տուն ու տեղ ձրգած՝ ելանք գաղթեցին:


Մեր սան ու հողի Քիւրսը տրացաւ,
Կէսը բըռնի, կէսը ինար առաւ,
Երէկ ծառայ էր, իսկ այսօր աղա,
Բայ կայ Հայ աղա՝ քաղցած կը դողայ:

Քիչ մը դրամով հողերնիս կ'առնեն,
Փողը յետ չառած, իրենք կը վարեն,
Այս ի՞նչ օրէնք է, խելքս չի հասնիր.
Այսօր մեծ տկոս է՞ ՄԸ չի տանիր:



ԱՆԿԵՂԾ ԽՈՍՏՈՎ ԱՆՈՒԹԻՒՆ

Պասմեմ ձեզ , ի՛նչպէս պաշտօնիս մէջ մեծացայ ,
վախժան Գրգիր էի՝ վերջը թս ղական դարձայ ,
Խեղճ , աղբաս , կարդալ գրեւ շաս քիչ գիտէի ,
Խօսքը մեր մէջ մընայ , այլ շնորհի ունէի :
Ես այս պաշտօնիս մէջ մընացի շաս երկար ,
Այր , կիս , կ'աշխատեցունէի իմ կամքիս համար ,
Մեծկերտք քանդեցի քէճիս ուզածին պէս ,
կեղեքեցի բոլորին , լեցուցի նէպրս :
Շատերուն յայտնի չէ , որ ես ուսում չունիմ ,
Բայց կարդալու տեղ՝ սուր եւ մեծ ականջ ունիմ ,
Լրսածներուս վըրայ տարն ալ սուտ կը դըրնեմ ,
Խսկոյն կ'երթամ թուրքին եւ քիւրսիին կը պասմեմ :
Իմ պասմածով քանի՛ մարդու տուն քանդեցի ,
Մեղքս ի՞նչ պահեմ , հաշիւ գրենել չի կըրցի .
Ընկեր ու բարեկամիս հացէն գրկեցի ,
Միտ գետնէն սողալով՝ պաշտօններ խրկեցի :
Վերջը , խօսքը մեր մէջ մընայ , երբ ժամանակ ,
Ի՛նչ դաս որ կը տեսնեն , ես որպէս Աւանակ ,
Միտ ականջներս կը կախեմ ու կը լըռեմ .
Ի՞նչ փոյթ , ամսականքս կ'առնեմ՝ քէճիս կը նայեմ :
Կը հաւատա՞մ , բանէ մը յետ չեմ մընար ես ,
Իմ շահերուս համար գետնէն կը սողամ ես .
Այսպէս թէ այնպէս , մալ ու միլիի տէր եղայ ,
Մեղքս շաս է , կ'աղաչեմ , Տէր , ես քեզ մեղայ :






Նաս կը սիրեմ ռահանին,
Միշտ կը բուսնի մեր արտին,
Ինձ ի՞նչ ծաղիկը լեռան՝
Երբ այնտեղ չի կայ ռահան:

Ռահանը լեզու չունի,
Հոս ունի, բայց խիղճ չունի,
Տանջեց ու մաշեց սիրտը,
Յրէ՛ որ շացուց տարտը:

Ռահան առած ուխտ գացի,
Կուրծքը կոտորին բացի .
Իմ մուրազը չի տուեց,
Սիրտը այլ կըրակ օրգեց:


Այն օրէն սիրտը վառաւ,
Երբ ռահնը մարդ մը տարաւ .
Ոսկի, արծաթ շատ ունիմ .
Բայց ի՞նչ ընեմ, ռան չունիմ:

Յոյսը դեռ չեմ կրտեր ես .
Հերիք է, որ Մեծկերտ ես .
Յո՛ւր մը ականջիդ գաղտնի
Սէրը քեզ կ'անեմ յայտնի:





Ո Ի Խ Տ Ա Տ Ե Ղ



Քանանն Մաւնուկ ուխտատեղ,
Համ ուխտատեղ, համ շաւ տեղ .
Ո՞վ կուզէ եւարիկն տեսնել ,
Թո՛ղ վագէ երթայ այն տեղ :


Հարս եւ աղջկունի գարդարուած ,
Հոն կը վագեն ֆրսընած ,
Գիւնի , օղի , կերակուր ,
Ունիկն հետերնիկն առած :

Ղուրպան կը սանեն հաւ մը ,
Ամենիք ունիկն ցաւ մը ,
Եարը եւարիկ կը փրկեսրոէ ,
Ինչպէս խորոզը հաւ մը :

Սուրբ Մաւնուկ մուրադ կուտայ ,
Մանչ աղջիկ գաւակ կուտայ ,
Թէ որ եարդս ինձ ուզէ ,
Զիս աչ իմ եւարիկն կուտայ :

Քանանն Մաւնուկ ուխտատեղ ,
Հոն չի գայ ցաւիս դեղ .
Սրտիս սիրածը չի կար ,
Որ դառնայիկն միտատեղ :

Մուրադ շառած յէս դարձայ .
Եարիս տեսնէ՞ր կարօցայ ,
Երբ տեսայ եարիս հիշանդ ,
Տէրս շատ յրի ու խելիքցայ :
Խելիքցած եւ ուշաքարիած ,
Սենեակիկն մէջը շնկած .
Երբ մէկ քիչ աչքս բացի ,
Տեսայ եարիս եւ գրկած :



ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ

Մեծկերսու չորս բոյորը քար սար ,
Հոն սիրածը սիրածին շին քար .
Ո՛վ որ կրցաւ , կը փախցունէ լեռ ,
Առանց կրուի շեղած պրսակ դեռ :
 Ես կը սիրէի մէկ աղջիկան ,
 Աղջիկն ալ ինձ շատ եր հաւան .
 Բայց նորա հայր ու մայրն առսրգ ,
 Մեզ երկուսիս թողին մուրասսրգ :
Օր մըն ալ տեսնեմ սիրած աղջկաս ,
Զօռով հագցունցած են շուխա խաս .
Ինչպէս զոն կրնեն անմեղ գառ ին ,
Այնպէս ծեծով պսակի քար ին :
 Մեծկերս դարձաւ աչքիս մէկ փարա ,
 Սիրքս ու հոգիս եղաւ եարա ,
 Սրտիս վերին դեղ գտնել գացի ,
 Մեծկերս թողի՛ ուրիշ տեղ գացի :





Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր ,
Թէ շես հաւասար , վրկայ բեր :
Մեծկերտու մեջ սիրուն հարս մի ,
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Շաս գեղեցիկ եւ շաս սիրուն ,
Բայց գիտերներ միտ անհուն ,
Նամակ կր գրեի իր մարդուն ,
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Մարդը Ամերիկայի մեջ .
Մոռցած է կրկան՝ քեօին մեջ ,
Նամակ փարա չի դրկեր հիչ ,
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Մահկանացու է շեր փաշեր ,
Առանց երկ մարդ կր մաշեր ,
Անհամբեր փերփեր կր խաշեր ,
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Կինը Մեծկերտ յուսահասած ,
Դարման կ'ուզէ՝ սիրտը վառած .
Վերջը ուրիշ մարդ մի գրած ,
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Հարսնուկան բաղդը կը բանի ,
Այդ բանը կը մնայ գաղտնի .
Միայն վերջը կ'ըլլայ յայտնի :
Իրաւ է սուս է՝ շեմ գիտեր :

Խեղճ կինը չը կրցաւ տայ խոյս ,
Ծրնաւ դուրս ելաւ ինչպէս բոյս ,

Պանդուխտ հայրիկան այժր լոյս,
Իրաւ ե սուտ ե՛ չեմ գիտեր :

Այսպէս շատ մը սիրուն կիներ,
Ունին գաղտնի ու մութ բաներ :
Ո՞վ որ չուզեր այսպէս սրդայ,
Թող հայրենիք վերադառնայ :

* * * * *

Եա՛ր, բոսակ շահեցաւ համար երկրէն հեռացար,
Գեղեցիկ հարս ու աղջիկներ տեւար, ինձ մոռցար,
Ճանապարհները բացուած ե, ինչո՞ւ չես գար,
Վերջի գիշեր շուտ վերադառնայ խոսացար :

Ինչո՞ւ ոտներս ձեռներս կապեցիր գացիր,
Անմարտի կրակ ու բոց սիրքս ձրգեցիր .

Ճանապարհները բացուած ե, ինչո՞ւ չես գար,
Վերջի գիշեր շուտ վերադառնայ խոսացար :

Ըստկըղ պէտք չե՛. միայն տեսութեան կարօտ եմ,
Այսպէս ապրելու տեղ կրթակըն քնկնեմ, դայիլ եմ,
Ճանապարհները բացուած ե, ինչո՞ւ չես գար,
Վերջի գիշեր շուտ վերադառնայ խոսացար :

Եկուր վերներս դարմանե՛, սիրքս այրեր եմ,
Այսօր սարի արցունքի թափած՝ նա՛խարհ պահեր եմ .
Ճանապարհները բացուած ե, ինչո՞ւ չես գար,
Վերջի գիշեր շուտ վերադառնայ խոսացար :

Բաւական ե՛ մեղ այստեղ թողնես որք ու անտէր,
Թողած վարդ ու ծաղկիդ օտարի ձեռք չի դրպէր .
Ճանապարհները բացուած ե, ինչո՞ւ չես գար,
Երբ դու չես գար, քանի նահիլ եմ, ինձ մօտը տար :





Մարդուն մէկը Ամերիկայէն վերադարձած՝
Իրեն խօսքով ազատութիւնը ինքը բերած.
Այժերուն ակնոցներ կար եւ փայլուն ձեռնոցներ,
Շատ ուռած փրփած՝ փողոցները կը պրտրտէր:
Ուռած պարունիս գրոյսը եւ ճեպը դասարկ,
Բայց հետը բերած էր սրտերով շեցուն մէկ պարկ,
Սուր ասամներովը կըրծեց ասոր ակնը միս,
Այսպէս ժողովուրդին խաբեց միայն մէկ ամիս:
Հոսած սուս երդումներովը խաբել չի կրցաւ,
Մեծկերտու մէջ խեղճ մարդը ծիծաղելի դարձաւ,
Իրեն ընթացքը բընաւ փայլելու չէր մարդկանց,
Սրտերուն վերջ տալով, շուտ բերանը դրոյն ասնձ:
Մեր երիտասարդին բերած յոսակը հասաւ,
Գառնը փօփինը մաշեց շարօխները հագաւ,
Վերջը աղաչանքներով եւ ծանր տկոսով,
Փողոցները ընկած՝ յոսակ կը փնտրէր պարսփով:
Երբ գիւղացիք իրմէ զրգուեցան, յոյսը հասաւ,
Զայն չի հանած՝ իշու պէս գընաց գունը մըսաւ:
Թէ որ մեր միւս պանդուխտներուն աչ աչապէս են,
Շատ բարիքներ կ'ընեն՝ եթէ պանդուխտ ըսպատեն:



ԵԱՇԱՍՐՆ ՆՈՒՐՐԻՅԷԹ



Երբ ամեն տեղ պոռացին կեցցէ Սահմանադրութիւն,
Խեղճ Հայր կարծեց ըստացաւ մարդկային ազատութիւն,
Նոր վստահութեամբ եզները լրծած արտը կը վարէր,
Ի՞նչ գիտէր վերջը վաստակը պիտի գան տանեն Քիւրտեր,
Թէ որ այս ապահովութիւն է, Եաշասըն Հուրրիյէթ:

Պէկը Հայ աղջիկ մը բըռնի իրեն տունը տարած էր,
Շատ շուտով կեավուռին իսլամացընել պատիրած էր,
Խեղճ աղջկան ծնողքները դիմեցին Առաջնորդարան,
Բայց պէկը մերժեց, հայր սուրբին գործն է եկեղեցական:
Թէ որ այս բռնութիւն չէ, պոռանք «Եաշասըն Մուսավաթ»:

Խեղճ Հայերուն քանի մը ոսկիներ տուին օգնութիւն,
Փոխարէնը առին տուն ու հողը ապահովութիւն,
Վերջը ըստակը տուրքի տեղ յետ հաւաքեցին շուտով,
Այս ի՞նչ խաղ է ըսի, անձամբ գացի գայմագամի քով,
Պատասխանեց լուր չունի: Որ սուտ չէ, կեցցէ Հուրրիյէթ:

Հին բէժիմին Հայերը ունէին փոքրիկ պաշտօններ,
Շատ հաւատարմութեամբ կ'աշխատէին երկար տարիներ,
Բայց Սահմանադրութեան վերջ քըննութիւն կատարեցին,
Հայերուն վըռընտեցին, տեղը թուրքեր նշանակեցին:
Թէ որ այս արդար քննութիւն է, Եաշասըն Մուսավաթ:

Ո՞ր մէկը ըսեմ, եղծում բըռնութիւն ամէն քայլի մէջ,
Գիշեր ցորեկ հանգստութիւն չունինք մեր խրճիթի մէջ,
Օր մը ա՛խ, օր մը վա՛խ այսպէս միշտ օրերնիս կանցունենք,
Մեր մարդկային իրաւունքները պաշտպանել կարող չենք.
Ինչ որ է, ո՞վ կուշտ է, թող գայ պոռանք՝ Եաշասըն

Հուրրիյէթ:





ԱՆԵԼԱՆԵԼԻ ԴՐՈՒԹԻՒՆ



Դուրսը ձիւն կուգայ, քամին կը փրչէ,
Անգութ պէկը մեզ Սուրխան կը կանչէ .
Բոպիկ ոտքերով մենք ի՞նչպէս երթանք,
Եթէ չերթանք, կայ ծեծ ու հայհոյանք:
Ճանքաները շամուռ, էշ չի բանիր,
Պէկը կ'ուզէ ջրաղացքին ալիւր,
Իշու պէս մենք պէտք է շալկած երթանք,
Եթէ չերթանք, կայ ծեծ ու հայհոյանք:

Ամառը արեւի տակ խաչեցանք,
Մէկ երկու շափ ցորեն վաստըկեցանք,
Ան ալ պէկը կուզէ որ իրեն տանք,
Եթէ չի տանք, կայ ծեծ ու հայհոյանք:

Ամառ ու ձրմեռ քրտինք կը թափենք,
Սև կրկըլ հացէն աչք չենք բանար մենք,
Պէկը կ'ուզէ, որ միշտ՝ լանք, հաց մուրանք,
Թէ չի մուրանք, կայ ծեծ ու հայհոյանք:

Հողով ու մարմնով պէկին ծախուած ենք,
Միշտ նեղութեանց լըռել ըստիպուած ենք,
Պէկը չի թողուր ազատութիւնք երթանք,
Եթէ փախչինք, կայ ծեծ ու հայհոյանք:

Մարտ աղջիկնիս մենք նըշանեցինք,
Ի՛նչ նեղութիւնով, այդ զիտէ երկինք,
Բայց պէկը կ'ուզէ որ իր մարդուն տանք .
Եթէ չի տանք, կայ ծեծ ու հայհոյանք:

Հաց եփելու կանչեցին մեր հարսին,
Հոգ չէ, ուրիշները ի՞նչ կը խօսին,
Պէկը՝ պատուիրեց հարսին՝ տուն չերթաք,
Հարսը տուն գայ, կայ ծեծ ու հայհոյանք:

Սուրբ օր է, պէտք է երթանք աղօթքի,
Գոնէ թողութիւն խնդրենք մեր մեղքի,
Բայց պէկը հակառակ է, ո՛ւր երթանք,
Եթէ երթանք, կայ ծեծ ու հայհոյանք:

Մեր ամէն ինչ կը պատկանի պէկին,
Տաւերնիս չենք կարող յայտնել մէկին,
Տարակերնիս անչափ է, մենք որը՞ լանք,
Եթէ մենք լանք, կայ ծեծ ու հայհոյանք:

ՄԵՐ ՎԻՃԱԿԸ

Ազքատ ու մերկ Հայիր ցուրտէն զոզ ընկած,
Կ'ուզէին տաքցունել մարմիննին տառած,
Բայց արեւը պահած է ամպերու տակ,
Թէ դուրս չը գայ, ի՞նչ ընեն այն ժամանակ:

Խընդիրք ուղարկեցին Պատրիարքարան,
Որ չուտով վերջ մը տան այս թըշուառութեան,
Բայց Պօլսէնջ որ չուղարկեն լաթ կամ ըստակ,
Խեղճերը ի՞նչպէս ազրին այն ժամանակ:

Օր մը դիմեցին տեղւոյն գայմազամին,
Որ խեղճ որբերուն տեղ մը տան առանձին,
Բայց խընդիրք որ մընաց Մինասարի տակ,
Հայը ի՞նչ գլուխը լայ այն ժամանակ:

Խօսքըս մեր մէջ մընայ, ըսեմ չը մոռնամ,
Մեր թաղականք անկուշտ են ըսել կըրնամ,
Ըստացւած օգնութիւնը, կայ օրինակ,
Խեղճին չեն տար, ի՞նչ ընեն այն ժամանակ:
Այսպէս է, խեղճին վըրայ նայող չը կայ .
Որ մեռնի, ոչ տեղ կայ, ոչ ալ քահանայ,
Հարուստները այսպէս միշտ հակառակ,
Թըշուառ որբը ի՞նչ ընէ այն ժամանակ:
Աղքատը կ'աշխատի Աղաին համար,
Կուշտ է կամ մերկ է, Աղան չը հաւատար,
Ի՞նչ հոգր, թող սատկին որպէս աւանակ,
Ուրիշները կ'աշխատին այն ժամանակ:
Պէկը ու Աղան միշտ անխիղճ են, հոգ չէ,
Բայց մէկը կուշտ, շատեր քաղցած վայել չէ .
Ոմանց գիւղեր կայ, իսկ խեղճը անտնակ,
Թող որ ջրհեղեղ ըլլայ, այն ժամանակ:
Մեր տեղը ոչ խիղճ կայ, ոչ ալ մարդկութիւն,
Հայու գըլխուն ծեծ, վախ և միշտ բռնութիւն .
Ա'խ, ե՞րբ պիտ ըլլայ հաւասար շրջանակ,
Որ մարդիկ հանգիստ ապրին այն ժամանակ:



Ես կը կարծէի՝ երբ Մեծկերտ մըտնեմ,
Ուրախ ու զուարթ միշտ կեանք պիտ վարեմ,
Եւ հոն պիտ գըտնեմ մարդիկ երջանիկ,
Որ կը վայելեն կեանք մը քաղցրիկ:
Ես կը յուսայի տեսնել միութիւն,
Մեծկերտի մէջ սէր և հղբայրութիւն,
Բայց շատ ախո՛ս, բաց ի թշուառութեան
Բան մը չեն թողած այնտեղ Հայութեան:

Ես կը յուսայի հարուստ Մեծկերտցուն՝
Անպարները կը լինին միշտ լեցուն .

Ես ի՞նչ գիտէի, որ անգութ ֆիւրտեր
Մերկացուցած են շէն քաղաքը մեր :

Ես ի՞նչ գիտէի՝ անպատիւ մարդիկ,
Միշտ կը պըտըտուն երգիքէ երգիք,
Ոմանց ոսկիով, ոմանց արծաթով,
Խաբած ու տիրած՝ հոգով ու մարմնով :


Ես ի՞նչ գիտէի՝ ամօթ ու նամուս
Մէկդի թողած՝ պիտ քալեն հոն ու հոս,
Այժըմ երեսնուն սև քողը պատռած,
Ամուսնին թողած՝ ուրիշին յարած :

Քանի որ Մեծկերտ կ'ապրի Գող Ալօն,
Մըստօն ու Համօն, Հուսօն և Գալօն,
Վընտա վընտան դեռ շատ դեր պիտ' խաղայ,
Մուրաղրդ փորըզ մընայ, ֆիւրտ աղա' :

Հոգիս տանջուեցաւ, սիրտս մաշեցաւ,
Այնտեղ ապրելու իմ յոյսըս հատաւ,
Կըրկին ձրգեցի իմ հայրենիքըս,
Ի՞նչ անեմ, ես ազատ, բայց հայրենի՛քս . . .



ԼԱԻ Է ՄԵՌՆԻԼ ՔԱՆ ԹԷ ՉՅՐՉԱՐՈՒԻԼ



Տաճկաստանի մէջ թուրք պէկեր և կատղած քուրտ
աղաներ,


Կըղերի նրման ունին թաղեր ու շատ ծխականներ,
Հայերը պէկին կամ աղաին տուրք որ չի վըճարեն,
Չեն կարող ազատ տուն վերադառնալ լեռէն ու սարէն :

Այս կործանիչ սովորութիւնը խոր արմատ է ձրգեր,
 Հարիւր տարիներով քանդած է տուն ու տեղը մեր,
 Գիշեր ցորեկ կաշխատինք, ոչ հաց ունինք ուտելու,
 Ոչ կարողութիւն՝ մեր տանջուած մերկ մարմինը ծածկելու:
 Խընամի Մարտոն չորս ոսկի պարտք էր Մըստաֆա պէկին,
 Խեղճը շատ աշխատեցաւ, բայց չը կարողացաւ տալ ժա-
 մանակին .

Գիւղացիք ըստիպուած պիտ վրճարէին ըստակները,
 Թէ ոչ՝ պէկը կուգար կ'տանէր գիւղի ոչխարները:
 Խեղճ Հայը անդադար կուլայ կ'ողբայ, լըսող չի կայ .
 կ'աղաչեմ ըսէք, այսպէս կեանք ո՞ր մէկ աշխարհի մէջ կայ,
 Որ Հայը աշխատի, տանջւի, մաշէ հոգին ու սիրտը,
 Գայ հանգիստ ուտէ ու խըմէ թուրքը և գազան ֆուրդը:
 Հայու իրաւունքը, պատիւը ոտքի տակ առած են,
 Հարս ու աղջիկները միշտ թուրք և ֆուրտերը տարած են .
 Տեղային պաշտօնէութիւնը չի տեսնալ ուզած է,
 Խեղճ Հայը իր թափած արտասուքներուն մէջ խեղդուած է:
 Օր մը պէկի սլատկանող Հայուն լաւ ծեծեց ֆուրդ աղան,
 Աղաին վրայ շատ խիստ բարկացան պէկըն ու տըղան,
 Բայց փոխանակ ֆուրդին, գացին խեղճ Հայուն լաւ
 ծեծեցին .

Նհրմ
 269

Ըսէ աղաիդ՝ մեր Հայուն չի դըրպչի պատւիրեցին:
 Այսպէս միշտ ծեծ ու թալանի մէջ կ'անցունենք օրերնիս,
 Ինչ որ ունինք՝ պէկին ձեռքը, աղաին ալ հոգինիս,
 Այսպէս անտանելի է մեր երկիրը, ի՞նչպէս ապրինք,
 Հազար անգամ լաւ է մեռնինք, քան թէ այսպէս
 չարչարուինք:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՍ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՍ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՍ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆԿԵՐՍ

ԳԱՆ Հիմնարար գիտ. գրադ.



FL0080336

KA

[504]

Արքայ
269

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ Կ. ԱԻԵ

“ԶՈՒՐ ՀԻՒՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ,,. կասակերգութիւն
մէկ արար

“ՄԱՐԳԱՐ ՎԱՐԺԱՊԵՏ,,. խիս ծիծաղաւարժ
գաւեցս մէկ արար

“ՀՌԶԱԿԱԻՈՐ ԲԺԻՇԿ,,. խիս ծիծաղաւարժ
մէկ գործողութեամբ

“ՎԱՐՁՈՒ ՍՆՆԵԱԿ,,. կասակերգութիւն մէկ
արար (Ամերիկեան կեանքից)

Ֆանկացողները կարող են դիմել՝

ՀԱՍՅԷ՝

G. Avedis

Karangozova N° 3

ODESSA (RUSSIE)

Գին 40 փարա